



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Մեսրոպյան Մարինա

ՎՊՀ, Մանկավարժության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող
Գիտական ղեկավար՝ հ.գ.թ., դոց. Վ. Միրզոյան
Էլ. հասցե՝ marina.mesropyan.1998@mail.ru

ՀՈՒՅՋԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԵՐՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Ծերությունը մարդու կյանքի տարիքային վերջին փուլն է, որը բնութագրվում է և՛ հոգեկան, և՛ ֆիզիոլոգիական ոլորտում կատարվող փոփոխություններով: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխարհում տարեց-տարի ավելանում է ծեր բնակչության թվաքանակը, և անհրաժեշտություն է առաջանում հստակ պատկերացում կազմել ծերունական տարիքում հուզական դրսևորումների առանձնահատկությունների վերաբերյալ, քանի որ դրանք անմիջական ազդեցություն են ունենում ծերերի հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրսևորվող տարիքային մի շարք հատկությունների բացահայտումը կարևոր է ծերերի նկատմամբ համապատասխան վերաբերմունք դրսևորելու համար: Ծերունական տարիքում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխություններից են լսողության և տեսողության, մկանային համակարգի տոնուսի թուլացումը, ակտիվության և աշխատունակության նվազումը: Հոգնածության արագ առաջացումը թույլ չի տալիս երկար ժամանակ զբաղվել որևէ գործով: Տարիքի հետ թուլանում է նաև սրտամկանի աշխատանքը: Ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ արյան մատակարարումը դժվար է ընթանում, մկանները չեն ապահովվում անհրաժեշտ քանակությամբ թթվածնով և, հետևաբար, նվազում է մարդու ֆիզիկական հնարավորությունները, մեծանում է հոգնածությունը: Նրանց մոտ առաջանում են նաև շարժողական խնդիրներ՝ ազդելով քայլքի վրա, որոնք դառնում են դանդաղ և ոչ հաստատուն:

Հոգեկան ոլորտում տեղի ունեցող փոփոխություններից է ճանաչողական գործընթացների արդյունավետության անկումը: Օրինակ՝ կարող է նկատվել տեղեկատվության մշակման և մեխանիկական մտապահման արագության նվազում, ինտելեկտուալ ընդունակությունների թուլացում: Փոխվում են նաև ռեակցիաների արագությունը, դանդաղում է պերցեպտիվ տեղեկատվության մշակումն ու ճանաչողական գործընթացների արագությունը: Ճանաչողական գործընթացների թուլացումը ծերերի մոտ կարող են պայմանավորված լինել ուղղակի և անուղղակի պատճառներով: Ուղղակիների թվին են պատկանում գլխուղեղի հիվանդությունները, օրինակ՝ Ալցհեյմերի հիվանդությունը: Անուղղակիների թվին են պատկանում այն հիվանդությունները, որոնք, չնայած կապված չեն գլխուղեղի գործառույթների հետ, բայց կայնպես, ազդեցություն են ունենում ինտելեկտի վրա: Դրանք են՝ առողջության վատացումը, կրթվածության ցածր մակարդակը և այլն: Բացի վերոնշյալ փոփոխութ-

յուններից, նկատվում է նաև բնավորության գծերի փոփոխություն: Այս ամենն, անշուշտ, ազդում է նաև նրանց հույզերի դրսևորման և հուզական վիճակի վրա: Հույզը սուբյեկտի վերաբերմունքի արտացոլումն է շրջապատող աշխարհի նշանակալի օբյեկտների նկատմամբ: Որպես կանոն, ծերերի մոտ դրսևորվում է աֆեկտիվ ռեակցիաների անկառավարելիություն, անպատճառ տխրություն և լալկանության հակվածություն:

Ծերերին հատուկ հոգեկան վիճակ է մտահոգության՝ հաճախ ամբողջությամբ չգիտակցված արտահայտությունը: Այն ներառում է սեփական առողջության, երկրի քաղաքական և տնտեսական վիճակի մասին մտահոգությունները: Ծերերի մոտ առկա մտահոգության վերաբերյալ ուսումնասիրություններ է կատարել Կ. Ռոջակը, որի կարծիքով մտահոգության և անհանգստության պահանջմունքները ծերունական տարիքի տառապանքներից խուսափելու ինքնատիպ մեխանիզմ են [1]: Երբ ծերունական մտահոգությունը կրկնվում է, ինչը հաճախ է տեղի ունենում ծերերին անհանգստացնող իրավիճակներում, կարող է խրոնիկական դառնալ և առաջանալ առանց պատճառների: Ըստ մեզ՝ ծերության այս յուրահատկությունները ծեր մարդուն անօգնական են դարձնում ցանկացած անսպասելի իրադրությանում: Շրջակա միջավայրի նկատմամբ ուշադրության վատթարացումն իջեցնում է գրգռիչների նկատմամբ հետևողականությունը, նվազում է գրգռականությունը: Ծերերն ի վիճակի չեն վերամշակել այն տեղեկատվությունը, որը գալիս է մի քանի ուղիներով: Դրանք կարող են միակողմանի ընկալվել: Նման իրավիճակում, երբ ուշադրության այդ միակ օբյեկտն աֆեկտիվ բնույթի է, կարող է առաջանալ գերմտահոգություն: Որոշ հեղինակների հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ կապ կա մտահոգության և տագնապայնության միջև: Տագնապայնությունը դրսևորվում է ինչ-որ բանի շատ տհաճ, հաճախ սպասողական վիճակով՝ ուղեկցվելով մեկ կամ սոմատիկ մի քանի զգացումներով: Ծերերի մոտ տագնապայնություն կարող է առաջանալ հիմնականում երեք պատճառներով՝

1. վախ այն մտքից, որ հարազատները կհիվանդանան կամ կմահանան,
2. վախ, որ իրենք կհիվանդանան,
3. վախ, որ ընտանիքում կխախտվեն միջանձնային հարաբերությունները, և ինքը կմնա միայնակ [1]:

Ծերունական տարիքում դրական և բացասական հույզերի ապրման հարաբերակցությունը կախված է ծեր մարդու հոգեբանական անհատական առանձնահատկություններից, նրա՝ կյանքի նկատմամբ ունեցած դիրքորոշումներից, առողջական վիճակից և մի շարք այլ գործոններից: Կախված այն բանից, թե ինչ պայմաններում է ապրում ծեր մարդը, ովքեր են նրան շրջապատում, կարող է ունենալ տարբեր հույզեր՝ ուրախություն, տխրություն, վախ միայնությունից, մահվան հետ կապված մտքեր:

Ուրախությունը հուզական դրական վիճակ է, որը կապված է արդի պահանջմունքը բավարարելու հետ: Ծերության վաղ փուլերում ուրախությունը կարող է անձի

մոտ գերակշռող հույզ լինել, երբ նա, հետադարձ հայացք նետելով անցյալին, գոհ լինի իր կյանքից և ներկայում իրեն զգա ապահով ու սիրով շրջապատված: Եթե անձը ծերանալու փաստի հետ չի հաշտվում, ապա ավելի ուշ փուլերում նրա մոտ ուրախության հույզը բացակայում է, քանի որ նա պահանջ է ունենում անցյալ վերադառնալու, հնարավորինս հետաձգելու ծերության արտաքին դրսևորումների ի հայտ գալը, ինչը նրան չի հաջողվում: Սա կարող է հանգեցնել ուրախությանը տրամագծորեն հակառակ հույզի՝ տխրության առաջացմանը: Տխրության պատճառներն այս շրջանում բազմազան են: Այն կարող է պայմանավորված լինել իրադրային անհաջողություններով, կյանքի պայմանների փոփոխություններով, ինչպես նաև միայնության զգացումով: Այն հիմնականում դրսևորվում է ընտանիքի անդամներից և շրջապատից մեկուսացմամբ, լակնության հակվածությամբ, քախոսությամբ, հաղորդասիրության աստիճանի նվազմամբ:

Ծերունական տարիքին հատուկ հուզական ապրում է նաև վախը: Վախը ներքին վիճակ է, որը պայմանավորված է իրականում սպասվող կամ ենթադրվող վտանգով: Սա հիմնականում առաջանում է այն ժամանակ, երբ մարդը հայտնվում է մի իրադրությունում, որն իր կարծիքով ելք չունի, և նրա մոտ առաջանում է անօգնականության վախ: Վախի պատճառները տարիքային տարբեր շրջաններում տարբեր են: Ծերունական տարիքում վախի հիմնական պատճառ կարող են լինել՝

1. հարազատների կորուստը
2. մասնագիտական գործունեության ավարտը
3. ֆիզիկական և հոգեբանական առողջության թուլացումը
4. սոցիալական մեկուսացումը [2]:

Ծերունական տարիքի բնորոշ մյուս հույզը մենության զգացումն է: Մենության զգացումը մարդուն հատուկ է ցանկացած տարիքում: Հերոնտոլոգները պնդում են, որ միայնությունը տրավմատիկ հատուկ գործոն է ծերունական տարիքում, և ցույց է տալիս ֆիզիկական և ֆիզիոլոգիական վիճակի փխրությունը:

Իրենց կյանքի իմաստն անցյալում տեսնող ծերերն ավելի հաճախ և սուր են ապրում միայնությունը՝ անկախ այն հանգամանքից՝ միայնակ են ապրում, թե ընտանիքի հետ: Դրա հետ միասին միայնությունը կարող է պայմանավորված լինել մեկուսացմամբ, այսինքն՝ ընտանիքի և նրանց հոգատարության նկատմամբ արձանագրվող հետաքրքրության պակասով, կամ ընտանեկան և ընկերական հանդիպումների ինտենսիվության վերաբերյալ չափազանցված ապրումներով ու պատկերացումներով: Ապացուցված է, որ ամենից շատ միայնության զգացում են ունենում այն ծերերը, ովքեր ընդգծված կախվածություն և ցանկություն ունեն, որ անընդհատ հետաքրքրվեն իրենցով, ինչպես նաև նրանք, ովքեր ուզում են մշտապես լինել ինչ-որ մեկի ղեկավարության տակ:


Գ. Կրայզը գտնում էր, որ ծեր մարդիկ ավելի քիչ են տագնապ զգում մահվան մասին մտածելիս, քան երիտասարդները, և որ կյանքում հստակ նպատակ ունեցող մարդիկ չեն վախենում մահից: Ծերերը նշում են, որ ավելի շատ են մտածում մահվան

մասին, բայց՝ անսովոր հանգստությամբ [2]: Սակայն Կրայզը մատնանշում է նաև, որ մահվան նկատմամբ անհատական մոտեցումները ծերերի մոտ պայմանավորված է նրանց կյանքի արժեքներով, կյանքին հարմարվելու ամբողջական վիճակով: Մահից վախենում են նրանք, ովքեր չեն ընդունում դա որպես կյանքի վերջնական փուլ, և չհարմարվելով դրա հետ, սկսում են վախենալ մահից:

Մահվան մասին մտքերն իրենց դրսևորումներն են ունենում ֆիզիկական անհարմարության, հիվանդագին զգացումների ձևով:

«Ծերությունից պաշտպանվող» ծերերին հատուկ հոգեբանական մյուս վիճակը համարվում է դեպրեսիան: Ընդհանուր առմամբ, ծերունական դեպրեսիան դրսևորվում է արդյունավետ տոնուսի թուլացմամբ և աֆեկտիվ ապրումների դանդաղեցմամբ: Զուգահեռաբար, ծեր մարդու դեմքը սահմանափակ քանակով հուզական ապրումներ է ցույց տալիս [3]: Ծեր մարդիկ հայտնվում են շրջապատող աշխարհի դատարկ լինելու զգացման, նրա անպետքության ու ունայնության զգացման մեջ: Նրանց աչքի առաջ տեղի ունեցող ամեն բան թվում է անէական և անհետաքրքիր, հետաքրքիր է միայն անցյալը: Այս ապրումները ծերերի կողմից բնական են և չունեն հիվանդագին բնույթ: Սրանք արդյունք են կյանքի վերաիմաստավորման և ունեն ադապտացիոն արժեք, քանի որ հետ են պահում նոր ձգտումներից, պայքարից և դրանից բխող անհանգստություններից:

Պատկերացում կազմելով ծերունական տարիքին բնորոշ հուզական ապրումների վերաբերյալ, կատարել ենք հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել ծերերի մոտ հուզական դրսևորումների առանձնահատկությունները: Հետազոտությունն իրականացվել է Լ. Ա. Կարգինսկիի և Ա. Ա. Նեմիչի համանուն մեթոդաբանության միջոցով: Այն ուղղված է բացահայտելու ծերունական տարիքում հոգեկան ակտիվության, հետաքրքրության, հուզական տոնուսի, լարվածության և կոմֆորմության դրսևորումները: Հետազոտությանը մասնակցել են 65-90 տարեկան 30 մարդ: Հետազոտության արդյունքները ներկայացված են դիագրամի տեսքով:



Դիագրամ 1. ծերունական տարիքում հոգեկան ակտիվության, հետաքրքրության, հուզական տոնուսի, լարվածության և կոմֆորմության դրսևորման ցուցանիշներ

Ինչպես երևում է դիագրամից, ծերերի մոտ առավել բարձր արտահայտվածություն ունեն հետաքրքրությունը և հուզական տոնուր: Հետաքրքրության բարձր աստիճանը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծերերի կյանքում նոր իրադարձությունները փոքր տեղ են զբաղեցնում: Նրանց մտքերը հիմնականում զբաղված են անցյալի իրադարձություններով: Իրենց հարազատների և շրջապատի մարդկանց կյանքով հետաքրքրվածությունը պայմանավորված է անցյալը հետ բերելու անկարողության դատարկությունը լցնելու ցանկությամբ: Նրանք կարող են հետաքրքրվել անգամ այն ամենով, ինչն անցյալում կարող էր անհետաքրքիր թվալ:

Հուզական տոնուսի բարձր աստիճանը ցույց է տալիս ծերերի մոտ հուզական դրսևորումների տարաբնույթությունը, այսինքն՝ կախված իրավիճակի ընկալմամբ, ծեր մարդը կարող է դրսևորել ծայրահեղ հույզեր:

Ծերերի մոտ նկատվում է հոգեկան ակտիվության նվազում, ինչը վկայում է անձի հոգեկան գործընթացների արագության և ճշգրտության մակարդակի իջեցման մասին: Ծերերի մոտ սա դրսևորվում է ընկալման իմաստավորման դժվարության և հուզականային ոլորտում դիտվող փոփոխություններում գործողությունների ճշգրիտ և արագ կատարելու անկարողությամբ:

Լարվածության աստիճանի բարձրացումը ծերունական տարիքում օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարումների հիմքն է: Նկատվում է լարվածություն հատկապես հուզական ոլորտում. ծերերը դառնում են դյուրագրգիռ, նեղացկոտ, երբեմն էլ՝ լալկան:

Կոմֆորմության աստիճանի բարձրությունը ենթադրում է անձի հակվածություն որևէ վարքագծի նկատմամբ, երբ իրական կամ երևակայական ազդեցության տակ համոզմունքների փոփոխությունն է տեղի ունենում: Սա հետևանքն է այն բանի, որ ծերերն ավելի պահպանողական են, դժվարությամբ են վերագնահատում սոցիալական արժեքները, խուսափում են սխալ գործելուց, կոնֆլիկտներից, վախենում են հիասթափությունից, այդ իսկ պատճառով դրսևորվում են կոմֆորմության բարձր աստիճան:

Այսպիսով, ծերունական տարիքում դրսևորվող հուզական ապրումների տարբերությունները հիմնականում պայմանավորված են անձնային առանձնահատկություններով և այն հանգամանքով թե որքանով է անձն այս տարիքային փուլն ընկալում որպես փուլերից հերթականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Рошак К.**, Психологические особенности личности в пожилом возрасте, Москва, 1890, 522 с.

[2] **Крайг Г.**, Психология развития 9-й изд., Санкт-Петербург, 2005, 940 с.

[3] **Шахматова Н. Ф.**, Психическое старение М. Медицина 1996, с. 129.

**ՀՈՒՅՋԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԵՐՈՒՆԱԿԱՆ
ՏԱՐԻՔՈՒՄ**

Բանալի բառեր՝ ծերունական տարիք, դեպրեսիա, անձնային խանգարումներ, մենության զգացում, տազնապայնություն:

Ծերությունը մարդկային կյանքի տարիքային վերջին փուլն է, որը բնութագրվում է և՛ հոգեկան, և՛ ֆիզիոլոգիական ոլորտում կատարվող փոփոխություններով: Այդ փոփոխություններն ազդում են ծեր մարդու անձնային որակների, ճանաչողական ոլորտի և հուզական ապրումների վրա:

Հոգվածում ներկայացված է ծերունական տարիքի հոգեբանական ընդհանուր բնութագիրը, այն փոփոխությունները, որոնք նկատվում են ծերունական տարիքում և դրանց ազդեցությունը անձի հուզական ոլորտի վրա: Ուսումնասիրվել են նաև ծերունական տարիքին բնորոշ հուզական ապրումները: Իրականացվել է հետազոտություն, որի արդյունքում բացահայտվել է ծերունական տարիքում հոգեկան ակտիվության, հետաքրքրության, հուզական տոնուսի, լարվածության և կոմֆորմության աստիճանը:

Месропян Марина

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ЭМОЦИЙ В ПОЖИЛОМ ВОЗРАСТЕ

Ключевые слова: пожилой возраст, депрессия, личностные нарушения, чувство одиночества, тревожность.

Старость характеризуется как последний возрастной период жизни человека, во время которого происходят существенные изменения в психической, физиологической и эмоционально-волевой сферах, а также в познавательных процессах. В данной работе представлена краткая психологическая характеристика пожилого возраста, а также такие эмоциональные проявления, как чувство одиночества, тревожность, страх, депрессия. Исследование было проведено с целью выявления степени проявления психической активности, интересов, эмоционального тонуса, напряжения и конформизма у людей пожилого возраста.

PECULIARITIES OF EMOTIONS IN OLD AGE

Key words: old age, depression, personal disorders, feeling of loneliness, distress.

Old age is the last stage of human life, which is characterized by both mental and physical changes. These changes affect personality, cognitive sphere and emotions of older people. The article presents general psychological description of old age, changes of that period and the influences it has on the emotive sphere of a person, as well as feelings typical of that age. The research is aimed at discovering the degrees of mental activity, interest, emotional tonus, tension and conformity of older people.